



COVID-19-ի դեմ խթանիչ պատվաստանյութեր

Բարձրացրեք ձեր պաշտպանվածությունը

ԲԱՐՁՐԱՑՐԵՔ ՁԵՐ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՆՐ COVID-19-Ի ԴԵՄ

- COVID-19-ի դեմ թարմացված (երկվալենտ) Pfizer and Moderna պատվաստանյութերը պաշտպանում են COVID-ի սկզբնական՝ բնօրինակ տարբերակից և ավելի նոր Omicron ենթատեսակից:
- Թարմացված խթանիչ դեղաչափը ստանալը ուժեղացնում է ձեր դիմադրողականությունը այն ենթատեսակների նկատմամբ, որոնք մենք հիմա տեսնում ենք և որոնք ակնակալում ենք տեսնել այս ձմեռ: Սա ձեզ տալիս է ավելի լավ պաշտպանվածություն COVID-ի ամենավատ հետևանքներից:



ԵԹԵ ՁԵՐ ՎԵՐՁԻՆ ԴԵՂԱՉԱՓԸ ՍՏԱՆԱԼՈՒՑ ԶԵՏՈ ԱՆՑԵԼ Է ԱՌՆՎԱԶՆ 2 ԱՄԻՍ, ՍՏԱՑԵՔ ԹԱՐՄԱՑՎԱԾ ԽԹԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԸ ԶԻՄԱ



5 Տարեկան և ավելի բարձր տարրի յուրաքանչյուր ոք պետք է պատվաստվի թարմացված խթանիչ դեղաչափով, նույնիսկ եթե նա արդեն ստացել է սկզբնական՝ բնօրինակ խթանիչի մեկ կամ մի քանի դեղաչափ: Թարմացված խթանիչը պետք է ընդունել հիմնական շարքի կամ սկզբնական խթանիչի վերջին դեղաչափը ստանալուց առնվազն 2 ամիս հետո:

Հատկապես կարևոր է, որ 65 տարեկան և ավելի բարձր տարրի մարդիկ ստանան խթանիչ դեղաչափ:

- Խթանիչից առաջացող կողմնակի ազդեցությունները նույնն են, ինչ հիմնական շարքի պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունները: Դրանց մեծ մասը լինում է թեթև կամ միջին ծանրության և տևում է 1-2 օր:
- 6 ամսականից 4 տարեկան երեխաները դեռևս չեն կարող ստանալ խթանիչ: Բայց եթե նրանք դեռ չեն պատվաստվել, պետք է ստանան իրենց հիմնական շարքի պատվաստանյութերը հիմա:
- Novavax-ի խթանիչ դեղաչափը հասանելի է 18 տարեկան և ավելի բարձր տարրի այն անձանց համար, որոնք չեն կարող պատվաստվել Pfizer կամ Moderna պատվաստանյութերով և նախկինում խթանիչ դեղաչափ չեն ստացել: Այն տրվում է հիմնական շարքի պատվաստանյութերն ամբողջությամբ ստանալուց 6 ամիս հետո:
- Դուք կարող եք COVID-ի դեմ պատվաստանյութի հետ **միաժամանակ ստանալ նաև գրիպի դեմ պատվաստանյութ:**

ԽԹԱՆԻՉՆԵՐԸ ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՏՐՎՈՒՄ, ՆՈՒՅՆԻՍԿ ԵԹԵ ԴՈՒՔ ԱՐԴԵՆ ՈՒՆԵՑԵԼ ԵՔ COVID

- **Պատվաստվելը ավելացնում է պաշտպանվածությունը:**
- Սպասեք, մինչև ավարտվի ձեր մեկուսացման շրջանը, որպեսզի ստանաք խթանիչ դեղաչափը: Կարող եք նաև դիտարկել ձեր ախտանիշների առաջանալուց կամ թեստի դրական արդյունքը ունենալուց հետո (եթե ախտանիշներ չեք ունեցել) 3 ամիս սպասելը: Հավանական չէ, որ 3 ամսվա ընթացքում դուք նորից կհիվանդանաք COVID-ով: Վարակվելու և պատվաստվելու միջև ավելի երկար ժամանակը կարող է նաև առաջացնել ավելի լավ իմունային արձագանք:



ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՃԱՐ ԵՆ. ԴՈՒՔ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ԶՈՒՆԵՔ

- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:

Ավելին իմանալու համար այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinate.lacounty.com) կամ գանգահարեք **1-833-540-0473**:

